

Վահե Հովհաննիսյան
*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի դոցենտ,
իրավ. գիտ. թեկն.*

**ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ԴԱՍՏԱԿԱՐԳՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Դատական ակտերի վերաքննության ընթացքում վերաքննիչ դատարանն իրականացնում է տարբեր իրավական արժևորում ունեցող գործողություններ, որոնք իրենց վերջնական ձևակերպումն են ստանում վերաքննիչ դատարանի ակտերում և արտահայտում են գործի հարուցման, քննության և լուծման կապակցությամբ դատարանի դատողությունները և եզրահանգումները: Ուղված լինելով քաղաքացիական դատավարությունում որոշակի խնդիրների լուծմանը՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումներն այս ատյանին օրենքով վերապահված լիազորությունների իրականացման արդյունք են, քանի որ լիազորության կիրառումը հանգում է կամ կոնկրետ դատավարական գործողություն կատարելուն կամ դրա կատարումը մերժելուն, որն արտահայտվում է համապատասխան որոշման կայացմամբ:

Իրավաբանական գրականության մեջ վերաքննիչ դատարանի ակտերին նվիրված ուսումնասիրություններ հաճախակի չեն հանդիպում, և եղածներն էլ սահմանափակվում են միայն դատական ակտերի ընդհանուր համակարգի, դատական ակտերի տեսակների վերլուծությամբ: Մինչդեռ վերաքննիչ դատարանի որոշումների բնույթն ու էությունը լիարժեք բացահայտելու համար միայն դատական ակտերի ընդհանուր հատկանիշների ուսումնասիրությունը բավարար չէ: Անհրաժեշտ է համակարգված վերլուծության ենթարկել վերաքննիչ դատարանի որոշումները, դասակարգել դրանք՝ ուսումնասիրելով վերջիններիս իրավաբանական բնույթն ու էությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն առանձնացնում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերը: Այսպես՝ ՔԴՕ 222-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ դատարանի կողմից միջանկյալ դատա-

կան ակտերի վերանայման արդյունքում կայացված որոշումները, ինչպես նաև վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը: Ուստի օրենսդիրը տարանջատել է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերը, ընդ որում, հիմք ընդունելով այն տրամաբանությունը, որը առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված վերաքննիչ դատարանի որոշումները գործն ըստ էության լուծող ակտեր են, իսկ միջանկյալ դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված որոշումները՝ միջանկյալ, քանի որ այս դեպքում վերաքննիչ դատարանը կան մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կան կայացնում է նոր դատական (միջանկյալ) ակտ, որը օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: Բացի այդ, ՔԳՕ-ի՝ վերաքննիչ վարույթը կարգավորող նորմերը մի շարք դեպքերում նախատեսել են նաև առաջին ատյանի դատական ակտերի վերաքննության կապակցությամբ միջանկյալ դատական ակտերի կայացման հնարավորություն:

Դատավարության օրենսդրությունը, առանձնացնելով գործն ըստ էության լուծող և չլուծող (միջանկյալ) դատական ակտերը, ընկել է ինքնահակասության մեջ: Այսպես, ՀՀ դատական օրենսգիրքը (հոդվ. 23, 39, 50 և այլն) և ՀՀ ՔԳՕ-ն (հոդվ. 216, 217, 222 և այլն), առանձնացնելով դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերը, միաժամանակ սահմանել են, որ վեճն ըստ էության լուծելու դեպքում դատարանը կայացնում է վճիռ (ՔԳՕ հոդվ. 130, մաս 1), իսկ դատական ակտը, որով ըստ էության չի լուծվում գործը, կայացվում է որոշման ձևով (ՔԳՕ հոդվ.144, մաս 1): Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, առաջին դեպքում օգտագործելով «վեճ», իսկ որոշման պարագայում՝ «գործ» եզրույթները, անհարկի նույնացրել է այս երկու հասկացությունները: Մինչդեռ ակնհայտ է, որ վեճը նյութաիրավական կատեգորիա է, իսկ գործը՝ գուտ դատավարական: ՔԳՕ 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանը կայացնում է վճիռ, իսկ գործի վարույթը կարճելու հիմքերը ոչ միշտ են վկայում դատարանում վեճն ըստ էության լուծելու մասին (օրինակ՝ ՔԳՕ 109-րդ հոդվածի 1-ից 6-րդ մասերով սահմանված դեպքերում, մասնավորապես, երբ վեճը ենթակա չէ դատարանում քննության, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական

ուծի մեջ մտած վճիռ, նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վճճի վերաբերյալ առկա է արբիտրաժային տրիբունալի վճճու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշում, բացառությամբ դատարանի կողմից արբիտրաժային տրիբունալի վճճու կամ ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը մերժելու դեպքի, գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, գործին մասնակցող իրավաբանական անձը լուծարվել է, հայցվորը հրաժարվել է հայցից): Մինչդեռ ՔԳՕ 222-րդ հոդվածի 3-րդ մասով վերաքննիչ դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին որոշումը դասակարգվել է միջանկյալ դատական ակտերի շարքին:

Կարծում ենք, որ օրենսդրորեն ավելի ճիշտ է օգտագործել **«գործն ըստ էության լուծել»** ձևակերպումը, նկատի ունենալով, որ այս դեպքում լուծում է ստանում ինչպես վճճը՝ վիճելի նյութական իրավահարաբերությունը, այնպես էլ քաղաքացիական գործը: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ դատարանը վճճու է կայացնում նաև հատուկ վարույթի գործերով, սակայն այստեղ դատարանում քննության առարկա է հանդիսանում ոչ թե վճճը, այլ դիմումով ներկայացված պահանջը (հոդվ. 167, 172, 173.4 177 և այլն):

Ինչպես տեսնում ենք, դատական ակտերը դասակարգելու հարցում ՀՀ օրենսդրությամբ ամրագրված մոտեցումը ոչ միայն կարող է խառնաշփոթ առաջացնել, այլև չի արտացոլում վերաքննիչ դատարանի որոշումների իրավաբանական բնույթն ու առանձնահատկությունները, չի համապատասխանում այդ ակտերի տեսակային հատկանիշներին:

Դատական ակտերը դասակարգման են ենթարկվել նաև իրավաբանական գրականության մեջ, ինչն իրականացվել է տեսական վերլուծությունների արդյունքում՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության՝ խնդրո առարկային վերաբերող դրույթների մեկնաբանությունները: Ուստի առաջին հերթին պետք է պարզել, թե դասակարգումը ինչ չափանիշներով է իրականացվում և որքանով է կիրառելի վերաքննիչ դատարանի որոշումների պարագայում:

Հիմք ընդունելով դատավարագիտությունում համընդհանուր ճանաչում գտած դասակարգումը՝ որոշ դատավարագետներ (Ռ.Գ. Պետրոսյան, Ս.Գ. Մեղրյան, Վ.Մ. Ժուլյովը, Մ.Ա. Գուրվիչ, Ն.Բ.Ջեյդեր, Կ.Ա. Լեբեդ և այլք) առանձնացնում են դատարանի՝ գործն ըստ էության լուծող և

ըստ էության չլուծող կամ միջանկյալ դատական ակտերը, գործն ըստ էության լուծող ակտ համարելով միայն վճիռը¹: Այսպես, Ռ.Գ. Պետրոսյանի բնորոշմամբ վճիռը դատարանի այն որոշումն է, որով ըստ էության լուծվում է գործը, հաստատվում է վիճելի իրավունքի, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, որի հետևանքով այդ իրավահարաբերությունը վիճելիից դառնում է անվիճելի, հետևաբար և՛ հարկադիր կատարման ենթակա²: Հաշվի առնելով հատուկ վարույթի կարգով քննվող գործերի արդյունքում դատարանի կողմից ևս վճիռ կայացնելու հանգամանքը՝ Ս.Գ. Մեղրյանն իրավագիտորեն նշում է, որ վճիռն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն դատական ակտն է, որով ըստ էության լուծվում է գործը, հաստատվում է վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ոչ հայացային գործերով՝ այլ իրավական հանգամանքները, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունը կամ իրավական հանգամանքը վիճելիից դառնում է անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված սուբյեկտիվ պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման: Ի տարբերություն գործն ըստ էության լուծող ակտերի՝ որոշումներ են կոչվում այն դատական ակտերը, որոնք կայացվում են ոչ թե գործն ըստ էության լուծելու, այլ քաղաքացիական գործի հարուցման, դատական քննության և վճիռների կատարման ընթացքում ծագող միջանկյալ դատավարական բնույթի հարցերով³: Ուստի, հեղինակի պնդմամբ գործն ըստ էության լուծող դատական ակտ կարող է համարվել բացառապես վճիռը, իսկ վերահաս դատական ատյանների որոշումները, որոնք որոշ դեպքերում լուծում են գործը, դադարեցնում են գործի հետագա ընթացքը (շարժը), եզրափակում են տվյալ գործով դատական գործունեությունը, որպես գործն ըստ էության լուծող դատական ակտեր դիտարկվել չեն կարող, այլ ունեն լրացուցիչ, սուբսիդիար նշանակություն⁴:

Ակնհայտ է, որ ՀՀ օրենսդիրը, հակասական դրույթներ սահմանե-

¹ Տե՛ս Жуйков В.М. Пролемы гражданского процессуального права. -М., 2001, Гурвич М.А. Судебное решение (теоретические проблемы). М., 1976, Зеидер Н.Б., Судебное решение по гражданскому делу. -М., 1966, Лебедь К.А. Решение арбитражного суда. М., 2005.

² Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., նշվ. աշխ., էջ 453:

³ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշվ. աշխ., էջ 11-27:

⁴ Տե՛ս նույն տեղում:

լով, հստակորեն չի սահմանագատել գործն ըստ էության լուծող դատական ակտերը և վերաքննիչ ատյանի որոշումները: ՔԳ-Օ 221¹-րդ և 222-րդ հոդվածներում օգտագործելով «վերաքննիչ դատարանի գործն ըստ էության լուծող ակտ» բառակապակցությունը՝ անհարկի դժվարացնում է վերաքննիչ դատարանի ակտերի դասակարգումը: Ճիշտ է Ս.Գ. Մեղրյանի այն տեսակետը, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող վերաքննիչ դատարանի որոշումներն ընդամենը լուծում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վճռի հետագա ճակատագիրը: Այդպիսի ակտեր են՝

- վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնց հիման վրա ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտն ամբողջությամբ կամ մասամբ թողնվում է անփոփոխ և ստանում է վերջնական բնույթ,

- վերաքննիչ դատարանի որոշումները, որոնց գործի վարույթը լրիվ կամ մասամբ կարճվում է կամ հայցը թողնվում է առանց քննության,

- վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնցով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատական ակտը մասամբ բեկանվում կամ փոփոխվում է առանց գործը նոր քննության ուղարկելու:

Վերաքննիչ դատարանը, վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ստուգելով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ակտի օրինականությունն ու հիմնավորվածությունը, միաժամանակ դատական վերահսկողություն է իրականացնում ստորադաս դատական ատյանի գործունեության նկատմամբ, որը ենթադրում է նաև դատական գործունեության ընթացքում բացահայտված սխալներին և խախտումներին արձագանքելու, դրանք վերացնելու համար անհրաժեշտ իրավական միջոցներ կիրառելու հնարավորությունը: Ուստի վերաքննիչ դատարանի որոշմամբ կամ հաստատվում է առաջին ատյանի դատարանի կողմից կայացված դատական ակտի ճշտությունը, վերացվում են ստորադաս դատարանի ակտում առկա թերությունները՝ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ կամ լրիվ պատճառաբանելով, ինչպես նաև փոփոխություն կատարելով դատական ակտում, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված հանգամանքները թույլ են տալիս դա անել, կամ դադարեցվում է վարույթը՝ գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում: Այսինքն՝ վերաքննիչ ատյանն օրենքով նախատեսված կարգով և դեպքերում ստուգում և ուղղում է ստորադաս ատյանում թույլ տրված դատական սխալները, իսկ դրանք ուղղելու անհնարինության դեպքում՝ բե-

կանում է դատական ակտը, գործն ուղարկելով ստորադաս ատյան նոր քննության, որպեսզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն ըստ էության քննի գործը՝ վերացնելով նախկինում գործի քննության ընթացքում թույլ տրված իրավունքի խախտումները:

Դժվար է չհամաձայնել ներկայացված դիրքորոշման հետ, սակայն, մեր կարծիքով, վերոնշյալ մոտեցումը չի կարող ամբողջությամբ սպառել վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման խնդրի իրավական բնույթն ու բովանդակությունը:

Կարծում ենք, որ ոչ թե պետք է սկզբունքորեն սահմանազատել գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանի կողմից բողոքների քննության արդյունքում կայացվող դատական ակտերից, այլ ներկայացնել դատական ակտերի այնպիսի ունիվերսալ դասակարգում, որի շրջանակներում կարելի է դիտարկել բոլոր դատական ատյանների որոշումները՝ միաժամանակ վերացնելով այն տերմինաբանական խառնաշփոթը, որն առկա է գործող ՔԴՕ-ում:

Մեր կարծիքով՝ ստեղծված իրավիճակն է սկզբանե դատական ակտերի դասակարգմանը սխալ մոտենալու հետևանք է: Նախևառաջ, ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս առանձնացնել **վերջնական և միջանկյալ** դատական ակտերը:

Հարկ է նշել, որ ՀՀ օրենսդրությունը վերջնական դատական ակտերի հասկացությունը չի տալիս: Ուստի դրանց իրավական բնույթն ու էությունը բացահայտելու համար պետք է առաջին հերթին ուշադրության արժանացնել խնդրո առարկայի վերաբերյալ ձևավորված դատական պրակտիկան՝ հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահատված իրավական դիրքորոշումները:

Բոլոր դատական ակտերի, այդ թվում՝ վերաքննիչ դատարանի որոշումների վերջնական բնույթը կապված է օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ: Նման մոտեցումը բխում է Եվրոպական դատարանի՝ Նիկիտինն ընդդեմ Ռուսաստանի գործով 20.06.2004թ., Ռաշն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 13.01.2005թ., Բուրցևն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով 22.09.2005 Վճռումներում¹ արտահայտած իրավական դիրքորոշումներից, որոնց հիման վրա ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ ԱԲԴ 0062/02/08 քաղաքացիական գործով կայացված

¹ Տե՛ս Case of Nikitin v. Russia, application 50178/99, judgment, 20 հունիսի 2004 թվական: Case of Rushv. Russia, judgment, 13 հունվարի 2005 թվական: Case of Burcev v. Russia, application judgment, 22 սեպտեմբերի 2005 թվական:

13.01.2009թ. որոշմամբ¹ մեկնաբանելով իրավական որոշակիության սկզբունքը, սահմանել է, որ՝

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայում՝ միայն կրկնակի քննության և նոր ակտի կայացման նպատակով,

- վերջնական դատական ակտի վերանայումը նահանջ չէ իրավական որոշակիության սկզբունքից, եթե այն իրականացվում է դատական սխալի, արդարադատության սխալի ուղղման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար:

Ինչպես տեսնում ենք, դատական ակտի վերջնական բնույթը պայմանավորվում է օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքով, ինչը, օրինակ, բխում է նաև ՀՀ ՔԳ-Օ 241.2-րդ հոդվածի բովանդակությունից, որի համաձայն վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Ծիշտ է, ՀՀ օրենսդրությունը դատական սխալը կամ արդարադատության սխալը վերացնելու նպատակով նոր կամ նոր երևան եկած հանգամանքներով հնարավոր է համարում վերանայել նաև ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, սակայն օրենսդրի տրամաբանությունը հանգում է այն մտքին, որ դատական ակտերը, օրինական ուժի մեջ մտնելով, ստանում են վերջնական բնույթ, պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց և քաղաքացիների համար ու

¹ Տե՛ս Գ-այանե Վարդանյանն ընդդեմ Վարդան և Միշա Վարդանյանների, Արմավիրի նոտարական տարածքի նոտար Նարինե Մկրտչյանի, երրորդ անձ՝ Ջենմա և Սիմա Վարդանյաններ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արմավիրի տարածքային ստորաբաժանման, թիվ ԱԲԳ- 0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.01.2009 թ. որոշում:

ենթակա են կատարման ՀՀ ամբողջ տարածքում (ԶԴ-Օ հոդվ.14): ՀՀ օրենսդրությունը փաստորեն բացառում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի բեկանումը կամ փոփոխումը, դրանք համարելով վերջնական, միաժամանակ չթույլատրելով բողոքարկման քողարկված ձևով այդ ակտերի վերանայումը՝ բացառություն համարելով միայն նոր և նոր երևան եկած հանգամանքների ուժով դատական սխալի վերացման դեպքերը:

Չքննադատելով խնդրո առարկայի նման իրավակարգավորումը, հարկ ենք համարում նշել, որ դատական ակտի վերջնական բնույթը պետք չէ կապել միայն օրինական ուժի մեջ մտնելու հանգամանքի հետ: Արդարադատության սխալի ուղղման նպատակով փաստացի կարող են վերանայվել նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ անկախ, թե որ դատական ատյանի կողմից են դրանք կայացվել: Մեր կարծիքով՝ դատական ակտի վերջնական բնույթը պայմանավորված է կոնկրետ դատական ատյանում դատարանի կողմից քննարկվող հարցի լուծման կապակցությամբ դատարանի եզրահանգումներով: Այսինքն՝ այս դեպքում դատարանը որոշմամբ ներկայացնում է դատական գործունեության առարկան կազմող իրավահարաբերության կարգավորման վերաբերյալ իր վերջնական եզրահանգումները՝ լուծում տալով քննարկվող հարցերին:

Մեր կարծիքով վերջնական են վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնք արտահայտում են վերաքննիչ դատարանի վերջնական եզրահանգումներն ու դատողությունները վերաքննիչ բողոքարկման արդյունքում վերանայվող դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ կամ որոշակիորեն լուծում են վերաքննիչ դատարանի վարույթում գտնվող քաղաքացիական գործը, կարգավորելով այս ատյանում ծագած իրավահարաբերությունները ???, եզրափակում են գործի քննությունը՝ ավարտին հասցնելով գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը:

Վերաքննիչ դատարանի գործունեությունն ընդգրկում է ինչպես առաջին ատյանի դատարանի ակտերի օրինականության ու հիմնավորվածության ստուգումը, այնպես էլ կոնկրետ գործով վերաքննության շրջանակներում դատավարական միջանկյալ խնդիրների լուծմանն ուղղված գործողությունները, որոնք օրենքով սահմանված կարգով ձևակերպում են ստանում վերաքննիչ դատարանի որոշումներում: Վերոնշյալ ակտերն ունեն այլ նպատակային ուղղվածություն և արտացոլում են ոչ

թե վերանայվող դատական ակտի օրինականության վերաբերյալ վերաքննիչ դատարանի իշխանական դատողություններն ու եզրահանգումները, այլ ուղեկցում են վերաքննիչ վերանայմանը, ուղղված են դատավարական հարցերի լուծմանը, որոնք ապահովում են վերաքննիչ վարույթի իրավաչափ հարուցումը, բուն վերաքննությունը և գուտ դատավարական այլ խնդիրների լուծումը:

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերն այն որոշումներն են, որոնք ուղղված են վերաքննիչ վարույթի հարուցման, նախապատրաստման, ինչպես նաև բուն վերաքննության ընթացքում միջանկյալ դատավարական հարցերի (խնդիրների) լուծմանը:

Վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը ևս արդարատության ակտեր են, քանի որ դրանք գործնականում ապահովում են արդարադատության վերջնական նպատակների իրականացումը՝ սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը: Դրանք իրավակիրառ ակտեր են, քանի որ դրանց միջոցով իրացվում են քաղաքացիադատավարական նորմերը, ինչպես նաև ձևակերպվում են վերաքննիչ դատարանի այն գործողությունները, որոնք ուղղված են դատավարական հարաբերությունների ծագմանը, փոփոխմանը կամ դադարեցմանը:

Հիմք ընդունելով իրավաբանական գրականության մեջ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դասակարգման չափանիշները, վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերն ըստ *նպատակային ուղղվածության* կարող ենք բաժանել երեք խմբերի՝

- նախապատրաստական կամ վարույթի կանոնավոր ընթացքն ապահովող որոշումներ,
- արգելող որոշումներ,
- դատական սանկցիաներ կիրառող որոշումներ:

Վերաքննիչ դատարանի նախապատրաստական որոշումներն այն միջանկյալ դատական ակտերն են, որոնք ուղղված են վերաքննիչ վարույթի հարուցմանը, ինչպես նաև առաջին ատյանի դատարանի ակտերի ճշտությունը ստուգելու գործընթացն ու կանոնավոր ընթացքն ապահովելուն: Այդպիսի որոշումներ են, օրինակ, վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու, այդ թվում՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին որոշումները, դատական նիստի վայրը և ժամանակը որոշելու, զեկուցող դատավոր նշանակելու, գործի վարույթը կասեցնելու, գործը դռնփակ դատական նիստում քննելու, դատական նիստի լուսանկարահանում

թույլատրելու, գործի քննությունը հետաձգելու մասին որոշումները: Վերոնշյալ ակտերն ուղղված են վարույթի կանոնավոր ծագումը և զարգացումը, ինչպես նաև վերաքննիչ ատյանում գործի քննությունն ապահովելուն:

Արգելող են վերաքննիչ դատարանի բոլոր այն որոշումները, որոնք չեն թույլատրում կամ օրենքով սահմանված կարգով խափանում են վերաքննիչ վարույթի ծագումը և զարգացումը: Դրանք պայմանավորված են օրենքով նախատեսված որոշակի հիմքերի առկայությամբ, որոնք բացառում են ոչ իրավաչափ բողոքարկման, ինչպես նաև գործին մասնակցող անձանց որոշակի վարքագծի արդյունքում վերաքննության իրականացումը: Այդպիսի որոշումներից են վերաքննիչ բողոքը վերադարձնելու և վերաքննիչ բողոքը հետ վերցնելու դեպքում գործի վարույթը կարճելու մասին որոշումները: Ընդ որում, այս դեպքում պետք է շեղվել գործի վարույթը կարճող դատական ակտ կայացնելու վերաբերյալ ձևավորված ավանդական մոտեցումից և վերաքննիչ դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին որոշումը դիտարկել որպես միջանկյալ դատական ակտ: Մասնավորապես, եթե վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ, ապա ՔԴՕ 215-րդ հոդվածի 2-րդ մասը բողոքը հետ վերցվելու դեպքում ուղղակիորեն նախատեսում է գործի վարույթը կարճելու՝ վերաքննիչ դատարանի պարտականությունը: Եթե վճիռը բողոքարկել են նաև այլ անձինք, ապա գործի վարույթը կարճվում է միայն տվյալ բողոքի մասով: Այստեղից հետևում է, որ վերաքննիչ դատարանը բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում ընդհանրապես չի ստուգում առաջին ատյանի դատարանի վճռի օրինականությունը և հիմնավորվածությունը, այլ միայն օրենքով սահմանված կարգով արձագանքում է բողոքարկողի վարքագծին: Ուստի գործի վարույթը այս հիմքով կարճելու մասին՝ վերաքննիչ դատարանի որոշումը, վարույթի հետագա շարժը, որ զարգացումն արգելակող միջանկյալ դատական ակտ է, և կարգավորում է զուտ դատավարական բնույթի հարց:

Մեր կարծիքով պետք է առանձնացնել նաև դատական սանկցիաների կիրառում նախատեսող որոշումները: Ճիշտ է, դրանք ևս ուղղված են վարույթի կանոնավոր ընթացքն ապահովելուն, կիրառվում են դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու, նիստի բնականոն ընթացքին խոչընդոտելու, դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու և պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, սակայն կարող են կիրառ-

վել դատավարության ցանկացած մասնակցի, ինչպես նաև դատական միստիմ ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ, և ներառում են պետական հարկադրանք պարունակող ներգործության միջոցներ (ԶԳՕ հոդվ.115): Գատական սանկցիաների նպատակային ուղղվածությունը ոչ միայն գործի կանոնավոր քննության, այլ դատական միստի ընթացքում վարույթի մասնակիցների և ներկա գտնվող այլ անձանց պատշաճ վարքագծի ապահովումն է: Գրանք չեն խստիանում կամ արգելում գործի քննությունը և դատարանի կողմից կարող են կիրառվել բացառապես դատական միստի շրջանակներում, ինչով և տարբերվում են վերաքննիչ դատարանի միջանկյալ մյուս դատական ակտերից:

Հարկ է նշել, որ ի տարբերություն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների՝ վերաքննիչ ատյանն իրավունք չունի կայացնելու **լրացնող քնույթի միջանկյալ դատական ակտեր**, ինչը գործող դատավարության օրենսգրքի էական թերություններից է հանդիսանում:

Ըստ կայացման ձևի վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը բաժանվում են երկու խմբի՝

- առանձին դատավարական փաստաթղթի ձևով կայացվող որոշումներ,
- դատական միստում բանավոր հայտարարվող և արձանագրության մեջ ներառվող (արձանագրային) որոշումներ:

Օրենսգրքով կամ այլ օրենքներով նախատեսված դեպքերում բողոքարկման ենթակա ակտերը պետք է կայացվեն առանձին դատավարական փաստաթղթի ձևով, իսկ դատական քննության ընթացքում լուծում պահանջող հարցերով կայացված այն որոշումները, որոնք ենթակա չեն բողոքարկման, կայացվում են առանց առանձին ակտի ձևով այն ձևակերպելու: Այդ որոշումը հրապարակվում է բանավոր և ներառվում դատական միստի արձանագրության մեջ (ԶԳՕ հոդվ.144, մաս 1 և 3):

Հարկ է նշել, որ հոդվածի ձևակերպումն այդքան էլ ճիշտ չէ: Գործի դատական քննությունը ներառում է քաղաքացիական դատավարության բոլոր փուլերը, այդ թվում՝ վարույթի հարուցումը, վերաքննությունը և այլն, որտեղ արձանագրություն է վարվում միայն դատական միստում՝ բուն վերաքննության ժամանակ: Հետևաբար, գործնականում հնարավոր է արձանագրություն վարել միայն դատական միստում, ուստի ավելի ճիշտ կլինի օրենսդրությամբ սահմանել «դատաքննություն» եզրույթը, քանի որ դատական միստից դուրս որոշումը բանավոր հրապարակելն ու արձանագրության մեջ ներառելն անհնար է: Առանց առանձին ակտի

ձևով ձևակերպելու են կայացվում վերաքննիչ դատարանի կողմից նախագուշացումը կամ դատական նիստի դահլիճից հեռացնելու սանկցիաները, գործի քննությունը հետաձգելու մասին որոշումը և այլն: Բացի այդ, դատավարության` օրենսգրքով սահմանված կարգով վերաքննիչ դատարանը առանձին դատավարական փաստաթղթի ձևով կայացնում է որոշումներ, որոնք վճռաբեկության կարգով անմիջական բողոքարկելու հնարավորություն չեն նախատեսվում: Մասնավորապես, ՔԴՕ 214-րդ հոդվածի համաձայն` վերաքննիչ դատարանը բողոքը վերադարձնելու հիմքերի բացակայության դեպքում բողոք բերելու համար սահմանված վերջնաժամկետը լրանալուց հետո կայացնում է վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշում, որի մեջ նշվում են գործի քննության ժամանակն ու վայրը: Որոշումը պատշաճ ձևով ուղարկվում է գործին մասնակցող անձանց:

Վերոգրյալից հետևում է, որ դատական նիստից դուրս կայացվող ցանկացած որոշում պետք է ձևակերպվի առանձին ակտի ձևով, որպեսզի ապահովվի գործին մասնակցող անձանց տեղեկացումը կատարվող կամ կատարվելիք դատավարական գործողությունների մասին: Ընդ որում, օրենսդրական տեսանկյունից ավելի ճիշտ կլիներ բողոքարկման ոչ ենթակա որոշումներն առանձին ակտի ձևով կայացնելու հնարավորություն վերապահել դատարանին, եթե որոշումը գրավոր ձևով կայացնելու և գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականությունն ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով:

Ըստ վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորության` վերաքննիչ դատարանի որոշումները լինում են **բողոքարկման ենթակա և բողոքարկման ոչ ենթակա**:

Վերաքննիչ դատարանի` բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը հանդիսանում են վճռաբեկ վերանայման օբյեկտ և սպառիչ կերպով թվարկված են ՔԴՕ 222-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն վճռաբեկ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է վերաքննիչ բողոքը վերադարձնելու, վերաքննիչ վարույթը կարճելու և կասեցնելու վերաբերյալ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը կազմող յուրաքանչյուր տարրի խախտում կամ խախտման հնարավորություն պարունակող ցանկացած դատական ակտ պետք է ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյանին, եթե դա-

տաքննության արդյունքում կայացվող վերջնական դատական ակտն անմիջական ազդեցություն կարող է ունենալ կողմերի իրավունքների ու պարտականությունների վրա, այն է՝ փաստել իրավունքի առկայությունը, որոշել դրա չափը կամ գրկել իրավունքից: Ուստի բողոքարկման հնարավորություն նախատեսվի պետք է բոլոր այն դեպքերում, երբ քննվող գործով կայացվող վերջնական դատական ակտն անմիջականորեն կարող է ազդել կողմերի իրավունքների և պարտականությունների վրա:

ՀՀ դատավարական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ազդող վերջնական դատական ակտ կայացնում է պետության այն դատական ատյանը, որի դատական ակտերի համար բողոքարկման հնարավորություն նախատեսված չէ: Նման մոտեցումը կարող է արդար դատաքննության իրավունքի խախտման դեպքում ուղղակիորեն սահմանափակել անձանց դատական պաշտպանության իրավունքը: Այսպես, ՀՀ Գատական օրենսգրքի 51-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, բողոքարկման ենթակա չէ, ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքով վճռաբեկ դատարանը՝

- մասնակիորեն բեկանում ու փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտն ու կարճում է գործի վարույթն ամբողջովին, կամ դրա մի մասը, կամ՝ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը.

- վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում վճռաբեկ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է վերաքննիչ դատարանի դատական ակտը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում

վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի է պատճառաբանված, սխալ է պատճառաբանված կամ պատճառաբանված չէ:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի վերանայումից հետո վճռաբեկ դատարանը մերժում է վճռաբեկ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է դատական նոր ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀՀ դատավարական օրենսդրությունը հնարավոր է համարում դատաքննության ընթացքում մարդու իրավունքների ու պարտականությունների վրա անմիջականորեն ազդող, այլ կերպ ասած՝ գործն ըստ էության լուծող դատական վերջնական ակտի բողոքարկման հնարավորության բացառումը: Որոշ հեղինակների կարծիքով (օրինակ՝ Տ.Ն. Նեշատաևա)¹ մման մոտեցումն անընդունելի է, քանի որ տվյալ ակտն արդեն իսկ վճռորոշ է անձի իրավունքների ու պարտականությունների համար, և հետևաբար բողոքարկման հնարավորությունը դրանով չպետք է սահմանափակվի: Ուստի առաջարկվում է բացառել մարդու իրավունքներին անմիջականորեն ազդող դատական ակտի, ինչպես նաև դատաքննության ընթացքում արդար դատաքննության իրավունքի որևէ տարրի խախտման հնարավորություն պարունակող դատական ակտի բողոքարկման հնարավորության ցանկացած սահմանափակում: Իսկ որպես այդ մոտեցման շարունակություն՝ նաև անընդունելի է դիտել մարդու իրավունքներին անմիջականորեն ազդող բողոքարկման ոչ ենթակա դատական ակտի կայացման հնարավորությունը: Այս առումով անհրաժեշտ է ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորություններից բացառել քննվող գործով մարդու իրավունքներին, ազատություններին և օրենքով պաշտպանվող շահերին անմիջականորեն ազդող ակտ կայացնելու հնարավորությունը: Դատական պաշտպանության ենթակա իրավունքների վերաբերյալ կայացված ցանկացած դատական ակտ պետք է ենթակա լինի բողոքարկման:

Մեր կարծիքով, մման դեպքերում մենք անհարկի կարող ենք վնասել կամ սահմանափակել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետությունը: Դատական կարգով սուբյեկտիվ իրավունքների

¹ Տե՛ս Нешатаева Т.Н. Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. -М.: «Городец», 2007, էջ 83-101:

պաշտպանությունը հավասարապես վերաբերում է ինչպես դատարան դիմող կողմի (հայցվորի կամ բողոքարկողի), այնպես էլ մյուս կողմի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը: Բավարարելով բողոքը՝ վերադաս դատական ատյանն ապահովում է բողոքարկողի իրավունքներն ու օրինական շահերը, իսկ անհիմն բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելով՝ իրականացնում է գործին մասնակցող մյուս անձանց իրավունքների պաշտպանությունը: Հետևաբար գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ազդող դատական ակտերի բողոքարկման անսահմանափակ հնարավորություն սահմանելով կամ վճռաբեկ դատարանին իրավունքների վրա անմիջականորեն ազդող որոշում կայացնելու իրավասությունից զրկելով, մենք կարող ենք ի չիք դարձնել քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, որը ներառում է նաև դատական ակտով հաստատված իրավունքների հարկադիր կատարումը, և ստեղծել գործի դատական անվերջ քննության փակ օղակ:

Կարծում ենք, որ քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության ապահովումը պետք է ենթադրի գործով վերջնական որոշում կայացնող հատուկ օղակի գոյություն, վերջինիս կողմից գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ազդող որոշումների կայացման հնարավորություն, որը կեզրափակի իրավունքների արդյունավետ պաշտպանության ներպետական միջոցները:

ՀՀ վերաքննիչ դատարանը, ՀՀ դատավարական օրենսդրության համաձայն, ունի կողմերի իրավունքներին անմիջականորեն ազդող դատական ակտեր կայացնելու հնարավորություն: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և հաստատում է կողմերի հաշտության համաձայնությունը.
- մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից.

- ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, կամ էլ առանց քննության է թողնում հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

Գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ներգործող ակտ է հանդիսանում նաև դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանող և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատող՝ վերաքննիչ դատարանի որոշումը, որի բողոքարկումն իրականացվում է ընդհանուր կարգով: Սակայն ՀՀ օրենսդրությունը հաշտության համաձայնությունը չհաստատելու որոշումը բողոքարկելու հնարավորություն չի ընձեռում: Այսպես, ՀՀ ՔԴՕ 33-րդ հոդվածի համաձայն՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դատավարական հետևանքները: Դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե այն հակասում է օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Այստեղից հետևում է, որ հաշտության համաձայնությունը չհաստատելու վերաբերյալ դատարանի նկատառումների և դատողությունների հետ համաձայն չլինելու դեպքում կողմերը չեն կարող բողոքարկել դատարանի որոշումը: Պետք է նշել, որ այս դեպքում կողմերի իրավունքների խախտման կամ սահմանափակման մասին խոսք չի կարող գնալ: Դիշտ է՝ մենք կարող ենք այս մոտեցումը դիտարկել արդար դատաքննության իրավունքի խախտման տեսանկյունից, սակայն անպայմանորեն հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

- հաշտության համաձայնությունը կարգավորում է վիճելի նյութական իրավահարաբերությունը,
- հաշտության համաձայնությունը չհաստատելու արդյունքում շարունակվում է գործի դատական քննությունը,
- կողմերը կարող են հաշտության համաձայնություն կնքել նաև գործի դատական քննության ավարտից հետո ցանկացած պահի, այդ թվում՝ դատական ակտի հարկադիր կատարման վարույթի շրջանակներում:

Փաստորեն ՀՀ վերաքննիչ դատարանը նույնպես լիազորված է կայացնելու գործին մասնակցող անձանց *իրավունքներին անմիջական*

րեն ազդող կամ ներգործող դատական ակտ: Նման պայմաններում տվյալ ակտերի բողոքարկման սահմանների նեղացումը, մինչև ՀՀ դատավարական օրենսդրությամբ՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախատեսված շրջանակները, վերոհիշյալ նկատառումներով անընդունելի են: Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով պաշտպանություն երաշխավորված մարդու իրավունքներին անմիջականորեն ազդող յուրաքանչյուր դատական ակտի կայացման դեպքում պետք է հնարավոր լինի բողոքարկել արդար դատաքննության իրավունքի խախտումները, եթե դրանք, ինչպես նշեցինք, կարող են խախտել անձի դատական պաշտպանության իրավունքը: Մինչդեռ ՀՀ դատավարական օրենսդրությամբ՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու համար սահմանված պայմաններին բավարարող բողոք ներկայացնելու պարտականություն սահմանելը բացառում է արդար դատաքննության իրավունքի խախտման՝ տվյալ իրավունքի էությանը համապատասխանող ծավալով բողոքարկման հնարավորություն: Հետևաբար ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից մարդու՝ դատարանից պաշտպանություն հայցվող իրավունքների վերաբերյալ դատական ակտ կայացվելու պայմաններում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախատեսված նման պայմանների սահմանումը, մեր կարծիքով, Եվրոպական դատարանի նախադեպում արտահայտված դիրքորոշման իմաստով կսահմանափակի դատական ակտի բողոքարկման հնարավորությունն այն աստիճան, որ կխաթարի դրա բուն էությունը¹: Սակայն փաստելով այն հանգամանքը, որ դատական ակտի բողոքարկումն արդար դատաքննության իրավունքի տարր է, և անձի՝ արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտման վերաբերյալ ցանկացած ակտ պետք է հնարավորություն ունենա բողոքարկվելու, անհրաժեշտ է նկատել, որ դատական բոլոր ակտերի, որոնք հնարավոր է խախտեն անձի՝ արդար դատաքննության իրավունքը (ինչն էլ իր հերթին կարող է պարունակել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով պաշտպանություն երաշխավորված իրավունքներին ազդող դատական ակտի կայացման հնարավորություն), բողոքարկման հնարավորության նախատեսումը չի բխի արդար դատաքննության իրավունքի էությունից: Մասնավորապես հնարավոր է խախտվեն այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսիք արդարադատության արդյունավետությունն ու

¹ St'u Case of Levages Prestation Services v. France, judgment, 23 հոկտեմբերի 1996 թ., կետ 40:

արդարադատության տնտեսումն են, ինչը, անհարկի կծանրաբեռնի ՀՀ դատական համակարգը և կնվազեցնի դատական գործունեության արդյունավետությունը:

Ընդունելով մարդու՝ արդար դատաքննության իրավունքի որևէ տարրի խախտման վտանգ ստեղծող դատական ակտի բողոքարկման հնարավորության անհրաժեշտությունը՝ Եվրախորհրդի նախարարների կոմիտեի 07 փետրվարի 1995 թվականի՝ քաղաքացիական և առևտրային գործերով բողոքարկման ինստիտուտների և գործընթացների ներդրման ու դրանց գործունեության բարելավման վերաբերյալ անդամ պետություններին ուղղված N R (95) 5 առաջարկության մեջ ներկայացված են առաջարկներ, որոնցով հնարավոր է ապահովել դատական համակարգի գործունեության և դատական պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետությունը: Ըստ հանձնարարականի 5-րդ հոդվածի՝ երկրորդ ատյանի դատարանի կողմից բողոքների քննությունն ապահովելու համար, պետություններին անհրաժեշտ է դիտարկել ներքոհիշյալ միջոցառումներից մի քանիսի կամ բոլորի ընդունման հնարավորությունը՝

ա) թույլատրել դատարաններին կամ կողմերին համաձայնել առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված որոշ կամ բոլոր փաստերի հետ.

բ) թույլատրել կողմերին՝ հասնելու գործի որոշ ասպեկտներով սահմանափակված որոշման.

գ) երբ անհրաժեշտ է ստանալ բողոքարկման թույլտվություն, հնարավորություն տալ դատարանին սահմանափակել բողոքարկման սահմանները, օրինակ, միայն իրավունքի հարցերով.

դ) մտցնել նոր պահանջների, փաստերի կամ ապացույցների ներկայացման սահմանափակում երկրորդ ատյանի դատարանում՝ միայն եթե չեն առաջանում նոր հանգամանքներ կամ բացակայում են առաջին ատյանի դատարանում դրանք ներկայացնելու ներպետական օրենսդրությամբ նախատեսված պատճառները.

ե) սահմանափակել բողոքի քննությունը բողոքի ողջամիտ հիմքերով՝ պայմանով, որ խոսք գնա այն գործերի մասին, որոնք դատարանը կարող է գործել սեփական դրդապատճառներով:

Վերոնշյալ սահմանափակումները կիրառելի են նաև ՀՀ իրավական համակարգի համար, քանի որ Եվրոպական դատարանը Կոնվենցիային տված իր մեկնաբանություններում դատական ակտերի բողոքարկումը չի

դիտել որպես արդար դատաքննության իրավունքի տարր և նշել է, որ բողոքարկման հարցերում պետություններն օժտված են որոշակի ինքնուրույնությամբ: Այսպես, իր որոշումներից մեկում Եվրոպական դատարանը նշել է, որ «դատարանի իրավունքը», որի մասնավոր դրսևորումն է մատչելիության իրավունքը, բացարձակ չէ և կարող է ենթարկվել լռելյայն ենթադրվող սահմանափակումների, մասնավորապես բողոքի ընդունելության պայմանների հարցում, քանի որ այն էության մեջ պահանջում է հայեցողության որոշակի ինքնուրույնությամբ օժտված՝ պետության կողմից կարգավորում: Բայց և այնպես, արդարադատության մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես կամ այն աստիճան, որ դրա էությունը խաթարվի: Վերջապես, այդ սահմանափակումները կհամապատասխանեն 6-րդ հոդվածի առաջին կետին՝ պայմանով, որ դրանք հետապնդեն օրինական նպատակ, և գոյություն ունենա ողջամիտ համամասնություն օգտագործվող միջոցների ու սահմանված նպատակի միջև¹:

Վերաքննիչ դատարանի թե՛ վերջնական, թե՛ միջանկյալ դատական ակտերը, որպես դատական որոշումների տեսակներ, օժտված են ընդհանուր հատկանիշներով՝ դրանք կայացվում են վերաքննիչ դատարանի լիազորությունների սահմաններում, արտահայտում են դատարանի իշխանական կամքն ու եզրահանգումները, դատավարական նորմերի իրացման արդյունք են և կայացվում են դատավարական նորմերին համապատասխան, մտնում են օրինական ուժի մեջ և առանձին դեպքերում ենթակա են հարկադիր կատարման (օրինակ դատական սանկցիան), օրենքով նախատեսված կարգով կարող են բողոքարկվել վերադաս դատական ատյան:

Սակայն վերաքննիչ դատարանի վերջնական դատական ակտերը միջանկյալ դատական ակտերից առանձնանում են հետևյալ հատկանիշներով՝

- վերջնական դատական ակտերը կայացվում են բացառապես գրավոր, առանձին դատավարական փաստաթղթի ձևով ձևակերպելու միջոցով, որոնց բովանդակությունը սահմանված է օրենքով (ԲԴՕ հոդվ. 220),

¹ Տե՛ս Case of Brualla Gomezdelata Torre v. Spain, judgment, 19 դեկտեմբերի 1997 թ., կետ 33, Case of Edificaciones March Gallego S.A. v. Sapain, Judgment, 19 փետրվարի 1998 թ., կետ 34:

- վերջնական դատական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից (ՀՀ Սահմանադրության հոդվ. 91),

- վերջնական դատական ակտերն արտահայտում են վերաքննիչ դատարանի եզրահանգումներն ու դատողությունները առաջին ատյանի դատարանի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ,

- վերջնական դատական ակտի կայացումը եզրավակում է կոնկրետ գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը,

- դրանք բոլոր դեպքերում անմիջականորեն վճռաբեկության կարգով ենթակա են բողոքարկման:

Մեր կարծիքով, վիճելի նյութական և դատավարական իրավահարաբերության կարգավորմանն ուղղված լինելու չափանիշից ելնելով, վերաքննիչ դատարանի վերջնական դատական ակտերը կարելի է բաժանել **գործը լուծող և գործն ըստ էության լուծող որոշումների**:

Այս դասակարգման շրջանակներում վերաքննիչ դատարանի որոշումներն ուսումնասիրելու համար առաջին հերթին առանձնակի ուշադրության պետք է արժանացնել վերաքննիչ դատարանի կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելու հնարավորության հարցը: Ինչպես արդեն նշել ենք, ներկայումս իրավաբանական գրականության մեջ գերիշխում է այն տեսակետը, որ գործն ըստ էության լուծող դատական ակտ է հանդիսանում բացառապես վճիռը՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացված այն դատական ակտը, որով ըստ էության լուծվում է գործը, հաստատվում վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունները վիճելիից դառնում են անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման¹:

Առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող վերաքննիչ դատարանի որոշումների պարագայում, եթե վերաքննիչ ատյանը հանգում է այն եզրակացության, որ առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ թույլ է տրվել դատական կամ արդարադատության իրականացման սխալ, որպես կանոն, տեղի է ունենում հակառակ

¹ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշվ. աշխ., էջ 10:

գործընթաց, այն է՝ վճռով հաստատված իրավունքները և պարտականությունները, իրավահարաբերությունները դառնում (մնում) են վիճելի, իսկ սուբյեկտիվ պարտականությունները՝ հարկադիր կատարման ոչ ենթակա: Մասնավորապես, եթե վերաքննիչ դատարանն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը, բեկանված մասով գործն ուղարկում է ստորադաս դատարան նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը, ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և առանց քննության է թողնում հայցն ամբողջությամբ կամ դրա մի մասը, ապա բեկանված դատական ակտով հաստատված սուբյեկտիվ իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նյութական իրավահարաբերությունները դառնում են վիճելի և առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ՝ պարզման և կարգավորման ենթակա:

Վերաքննիչ դատարանի որոշումը, որով առաջին ատյանի դատարանի դատական ակտը թողնվել է օրինական ուժի մեջ, այդ թվում՝ երբ վերաքննիչ դատարանը պատճառաբանել է թերի կամ սխալ պատճառաբանված վճիռը, ընդամենը վերահաստատում է վերանայվող դատական ակտի օրինականությունը, ինչպես նաև այն բեկանելու հիմքերի բացակայությունը: Այս ամենի արդյունքում չբեկանված վճռը մնում է օրինական ուժի մեջ՝ դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով (ՔԳՕ հոդվ. 221, մաս 1): Կամ, եթե վերաքննիչ դատարանը բեկանում է դատական ակտը և կարճում գործի վարույթը, հաստատում է քաղաքացիական դատավարության իրականացման անհնարինությունը կամ արգելք հանդիսացող հանգամանքի առկայությունը: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը 26.05.2011թ. որոշմամբ բեկանել էր Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի թիվ 0176/02/10 10.04.2010թ. վճիռը և կարճել գործի վարույթը, գտնելով, որ օրենսդիրը դատարանին չի օժտել ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու իրավասությամբ, ինքնակամ կառույցն օրինական ճանաչելու վերաբերյալ պահանջը դուրս է դատական քննության սահմաններից և առկա է ՔԳՕ-ի 109-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ գործի վարույթը կարճելու հիմքը (վեճը ենթակա չէ դատարանում քննության):

Վերոգրյալից պարզ է դառնում, որ քննարկվող դեպքերում վերաքննիչ դատարանի որոշումն անմիջականորեն ուղղված չէ վիճելի նյութական իրավահարաբերությունների կարգավորմանը, վիճելի սուբյեկտիվ

իրավունքների կամ պարտականությունների հաստատմանը: Մինչդեռ **հենց վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորման հանգամանքը պետք է դնել գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերաքննիչ դատարանի այլ որոշումներից սահմանազատելու հիմքում:** Սակայն ասվածը չի նշանակում, որ ՀՀ ԶԳ-Օ-ն ընդհանրապես բացառում է վերաքննիչ դատարանի կողմից վիճելի իրավահարաբերության կարգավորման հնարավորությունը: Այսպես՝ ԶԳ-Օ 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանվել է, որ վերաքննիչ դատարանն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում կարող է մասնակիորեն բեկանել և փոփոխել դատական ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից: Այսինքն, այս դեպքում վերաքննիչ դատարանը, հենվելով առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների վրա, նորովի կարգավորում է նյութական իրավահարաբերությունը, հաստատում վիճելի սուբյեկտիվ իրավունքի կամ պարտականության առկայությունը: Օրինակ՝ Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատարանը թիվ ԵԶԳ/1002/02/08 գործով մասնակիորեն բավարարել էր «Յունի Գեյթ» ՍՊԸ-ի սնանկության գործերով կառավարիչ Խ. Նազարյանի հայցն ընդդեմ «Յունի Գեյթ» ՍՊԸ-ի տնօրեն Լուսինե Մակարյանի և հօգուտ ընկերության 12.366.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման մասին վճիռ կայացրել: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը, հենվելով Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատարանի 27.05.2011թ. վճռով հաստատված փաստական հանգամանքների վրա, մասնակի բեկանել և փոփոխել էր դատական ակտը, Լուսինե Մակարյանից «Յունի Գեյթ» ՍՊԸ-ի օգտին 1.500.000 ՀՀ դրամ գումար բռնագանձելու մասին որոշում կայացրել¹: Տվյալ դեպքում վերաքննիչ դատարանն ընդամենը փոփոխել էր բռնագանձման ենթակա գումարի չափը: Ավելին, հնարավոր են դեպքեր, երբ վերաքննիչ դատարանն էապես փոխի վճռի բովանդակությունը: Մասնավորապես, վերաքննիչ դատարանը 18.02.2011թ. որոշմամբ մասնակիորեն բեկանել և փոփոխել էր Երևան

¹ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԶԳ/1002/02/08 գործով 17.08.2011թ. որոշում:

քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ գումարի բռնագանձումը մերժելու մասին 18.06.2010թ. վճիռը, մասնակիորեն բավարարել «Էլ-Կաս» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից հոգուտ «Էլ-Կաս» ՍՊԸ-ի բռնագանձել 65.464.174.7 ՀՀ դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը)¹:

Ինչպես տեսնում ենք, վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա, կիրառում է նյութական և դատավարական իրավունքի նորմերը, լուծում է գործը և կարգավորում քննության առարկա նյութական իրավահարաբերությունը:

Մեր կարծիքով, գործն ըստ էության լուծող դատական ակտ է հանդիսանում նաև վերաքննիչ դատարանի՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանող և կողմերի հաշտության համաձայնությունը հաստատող որոշումը: Այսպես, քաղաքացիական դատավարությունում կողմերի հաշտության համաձայնությունն ինքնին դատավարական հետևանքներ չի առաջացնում: Անհրաժեշտ է, որ դատարանն օրենքով սահմանված կարգով իրավական գնահատական տա հաշտության համաձայնությանը, այն է՝ հաստատի օրինական համաձայնությունը կամ մերժի հաշտության համաձայնության հաստատումը, եթե այն չի համապատասխանում օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Եթե կողմերը փոխադարձ համաձայնությամբ փորձում են կարգավորել վիճելի իրավահարաբերությունը, ապա դատարանը ստուգում է նման կարգավորման օրինականությունը: Ընդ որում, դատավարությունում իրավական հետևանքներ է առաջացնում հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու փաստը: Ուստի վերաքննիչ դատարանի որոշումը, որով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանվել է ստորադաս դատարանի ակտը և հաստատվել է կողմերի հաշտության համաձայնությունը, իշխանական դատողություններ և եզրահանգումներ է պարունակում վիճելի իրավահարաբերության կարգավորման օրինականության վերաբերյալ, նյութական և դատավարական իրավունքի նորմերի կիրառման արդյունքում ուղղված է վիճելի սուբյեկ-

¹ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ԵԿԴ/2548/02/09 գործով 18.02.2011թ. որոշում:

տիվ իրավունքների կամ պարտականությունների հաստատմանը: Այս դեպքում վերաքննիչ դատարանը վերացնում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը, և հաստատելով կողմերի հաշտության համաձայնությունը, կայացնում է վիճելի իրավահարաբերության կարգավորմանն ուղղված որոշում: Փաստորեն վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորող վճռի փոխարեն ի հայտ է գալիս այդ հարաբերությունը կարգավորող նոր դատական ակտ: Օրինակ՝ վերաքննիչ դատարանը, քննելով Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 02.07.2010թ. թիվ ԵԱԲԴ/0424/02/10 վճռի դեմ բողոքը, 25.12.2010թ. որոշմամբ հաստատել էր ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքից բաժնեմաս առանձնացնելու վերաբերյալ կողմերի հաշտության համաձայնությունը և բեկանել առաջին ատյանի դատարանի վճիռը: Այսինքն՝ վերաքննիչ դատարանի այս որոշումը կողմերի իրավունքների և պարտականությունների վրա անմիջականորեն ներգործող դատական ակտ է, որով կարգավորվում է վիճելի նյութական իրավահարաբերությունը:

Բոլոր դեպքերում վերաքննիչ դատարանի որոշումը կրում է ***լրացուցիչ կամ սուրսիդիար բնույթ***, քանի որ՝

- վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա և իրավունք չունի միաժամանակ հաստատված համարել նոր փաստական հանգամանքներ՝ մասնակիորեն բեկանելով և փոփոխելով դատական ակտը, կամ

- վերաքննիչ դատարանը որոշում է կայացնում կողմերի հաշտության համաձայնության հիման վրա, որպես հիմք ընդունելով փոխադարձ իրավունքներ և պարտականություններ սահմանելու և վիճելի իրավահարաբերության կարգավորման ներկայացված տարբերակը:

Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերից պետք է սահմանազատել գործը լուծող ակտերը: Ընդ որում, գործը լուծող ակտեր պետք է համարել վերաքննիչ դատարանի բոլոր այն որոշումները, որոնք դատավարական տեսանկյունից լուծելով քաղաքացիական գործը, ըստ էության չեն լուծում վեճը և չեն կարգավորում վիճելի նյութական իրավահարաբերությունը: Տվյալ դեպքում քաղաքացիական գործի լուծումը հանգեցնում է վերաքննիչ դատարանի կողմից

ստորադաս դատական ատյանի դատական ակտի վերաքննության արդյունքում դրա օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ վերջնական եզրահանգումներն ու դատողություններն արտահայտող որոշում կայացնելուն, որի հետևանքով միաժամանակ կիրառվում են գործն վերաքննիչ ատյանի լիազորությունների կիրառման: Բացի այդ, վերաքննիչ դատարանի կողմից գործը լուծող դատական ակտի կայացման հնարավորությունն ուղղակիորեն կապված է վերաքննիչ ատյանում հարուցված վարույթի հետ և եզրափակում է այս ատյանում քաղաքացիական դատավարությունն ու դատարանի դատական գործունեությունը:

Գործնականում կարող է հարց առաջանալ՝ որպես գործը լուծող դատական ակտ պետք է դիտարկել միայն առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացվող որոշումները, թե՞ դրանց մեջ պետք է ներառել նաև միջանկյալ դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումները:

Մեր կարծիքով, գործը լուծող ակտ կարելի է համարել միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումները: Մասնավորապես, առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի վերաքննիչ բողոքարկումը տեղի է ունենում առաջին ատյանի դատարանում գործի քննության կամ վարույթի օրինականությունն ապահովելու նպատակով: Այսինքն, այս դեպքում վերաքննիչ բողոք բերողը միաժամանակ իրացնում է և՛ դատական պաշտպանության իր իրավունքը, և՛ ապահովում է գործի քննության օրինականությունը, ինչն ուղղակիորեն վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատական ատյանի գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործուն միջոց է: Փաստորեն նշված դեպքում քաղաքացիական գործի քննությունը չի տեղափոխվում վերաքննիչ ատյան, վերաքննիչ դատարանը չի ստուգում գործով առաջին ատյանի դատարանի վերջնական դատողությունների և եզրահանգումների օրինականությունը, այլ միայն ապահովում է առաջին ատյանի դատարանում վարույթի պատշաճ իրականացումը՝ վերացնելով ընթացակարգային հարցերի լուծմանն ուղղված միջանկյալ դատական ակտերը և կայացնում նոր միջանկյալ դատական ակտ:

ՀՀ ՔԳՕ 221-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ կայացնում է նոր դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից: Այսպիսով, տվյալ դեպքում վերաքննիչ դատարանի որոշումն ուղղակիորեն իրավական հետևանքներ է առաջացնում ստորադաս ատյանի դատարանի վարույթում և հիմք է դատավարական հարաբերությունների ծագման, փոփոխման կամ դադարման համար: Օրինակ՝ ՔԳՕ 92-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան հայցվորի կողմից այն ստանալու օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում: Որոշումը վերացվելու դեպքում հայցադիմումը համարվում է դատարանում ընդունված սկզբնական ներկայացման օրը (հոդվ.92, մաս 5): Նույնը սահմանված է նաև հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում (հոդվ.91, 4 և 5-րդ մասեր): ՔԳՕ 108-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանի կողմից գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը վերացվելու դեպքում գործի վարույթը համարվում է վերսկսված: Նույնը վերաբերում է նաև առաջին ատյանի դատարանի կողմից հայցը կամ դիմումն առանց քննության թողնելուն (հոդվ.104, մաս 3¹): Այսինքն, վերաքննիչ դատարանը կայացնում է որոշումներ, որոնք ուղղակիորեն ազդում են ստորադաս դատական ատյանում վարույթի շարժի վրա, կրում են գուտ դատավարական բնույթ, ուղղված են միջանկյալ խնդիրների լուծմանը:

Կարծում ենք, որ գործը լուծող դատական ակտ կարելի է համարել միայն ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացվող որոշումը, որն արտացոլում է վերանայվող դատական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ վերաքննիչ դատարանի վերջնական եզրահանգումներն ու հրամայական դատողությունները, եզրափակում է կոնկրետ քաղաքացիական գործով վերաքննիչ դատարանի դատական գործունեությունը և ուղղված չէ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորելուն:

Մեր կարծիքով, վերաքննիչ դատարանի՝ գործը լուծող դատական ակտեր են հանդիսանում՝

- վերաքննիչ բողոքը մերժելու և դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու մասին որոշումը,

- վերաքննիչ բողոքը մերժելու և թերի կամ սխալ պատճառաբանված, սակայն գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը պատճառաբանելու մասին որոշումը, որով առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվում է անփոփոխ և մտնում է օրինական ուժի մեջ,

- վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարող և համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելու մասին որոշումը, որը միաժամանակ բեկանված մասով գործը ուղարկում է ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը,

- ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանելու և ամբողջությամբ կամ մասնակիորեն գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին որոշումները:

Ընդ որում, վերաքննիչ դատարանի՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն դատական ակտը բեկանող և գործի վարույթը կարճող կամ հայցն առանց քննության թողնող որոշումները դիտարկվում են գործը լուծող դատական ակտերի շրջանակներում, քանի որ դրանք անմիջականորեն ուղղված չեն նյութական իրավահարաբերությունների կարգավորմանը, այլ ընդամենը եզրահանգումներ են պարունակում առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի ճշտության և ստորադաս դատական ատյանում գործի քննության ընթացքում վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայության մասին: Վերաքննիչ դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում գործի վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին որոշում է կայացնում այն դեպքերում, երբ վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու հիմքերն ի հայտ են եկել առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամանակ և դատարանը չի արձագանքել, համապատասխան իրավական գնահատականի չի արժանացրել դրանք: Իսկ ՔԴՕ 103րդ և 109-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու հիմքերը վկայում են այնպիսի հանգամանքների առկայության մասին, որոնք ուղղակիորեն բացառում են գործով տվյալ վարույթի շրջանակներում քաղաքացիական դատավարության իրականացումը և արգելակում են գործի հետա-

գա շարժը: Դա պայմանավորված կարող է լինել գործը քննելու և լուծելու՝ դատարանի իրավասության բացակայությամբ, կամ նյութական իրավահարաբերությունն օրինական ուժի մեջ մտած ակտով կարգավորված լինելու, վեճը վերանալու և իրավահարաբերության անվիճելիության, ինչպես նաև գոյություն ունեցող վիճելի իրավահարաբերությունը դադարելու հանգամանքներով¹:

Վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերն օժտված են վերջնական դատական ակտերին բնորոշ բոլոր հատկանիշներով, սակայն գործն ըստ էության լուծող դատական ակտերը նաև՝

- հաստատողական ակտեր են, քանի որ ուղղված լինելով վիճելի նյութական իրավահարաբերության կարգավորմանը, ոչ միայն եզրահանգում են պարունակում վերանայվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ, այլև միաժամանակ հաստատում են նյութական իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը,

- ունեն օրինական ուժի մեջ մտած վճռի իրավական ուժը կազմող բոլոր հատկանիշները:

¹ Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ դատավարության կողմ հանդիսացող քաղաքացու մահվան կամ իրավաբանական անձի լուծարման դեպքում իրավահաջորդության բացակայության հետևանքով վիճելի նյութական իրավահարաբերությունը դադարում է:

Vahe Hovhannisyan
Chair of Civil Procedure, YSU
Candidate of Legal Sciences, Docent

**THE PROBLEM OF CLASSIFICATION OF THE DECISIONS OF
THE COURT OF APPEAL IN CIVIL PROCEDURE**

In the present article the norms of Civil Procedural Code of RA concerning classification of judicial acts are analyzed and in the result an attempt is made to separate final and interim judicial acts of the appeal court. By the way, classification is based both on the criteria envisaged in Civil Procedural Code of RA and traditional concepts in legal science. The provisions of Civil Procedural Code of RA on classification of judicial acts appear to be inefficient for revealing types and essence of decisions of the appeal court. A new classification of judicial acts is suggested within frames of which it is possible to distinguish judicial acts solving the case in essence, the ones solving the case and interim judicial acts. This approach comes in ultimate correspondence with the legal nature and essence of acts adopted by different judicial instances or RA. Criteria for suggested classification are introduced and the necessity of application is substantiated.